ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28

ք. Երևան «15» « 04 » 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ճանապարհ» ՍՊԸ-ն՝ ի դեմս գլխավոր տնօրեն Է. Բեզոյանի և «Արցախճան» ՍՊԸ-ն՝ ի դեմս գործադիր տնօրեն Ռ. Սողոյանի, (այսուհետ՝ երկուսը միասին Կատարող), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 29.03.2021թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Ավտոմոբիլային ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմերի վերանայման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 90 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 11 820 000 (տասնմեկ միլիոն ութ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Յուրաքանչյուր փուլի ավարտից հետո ներկայացրած փաստաթղթերի դիմաց վճարում չի իրականացվում:

Վճարումն իրականացվում է պայմանագրով նախատեսված աշխատանքի արդյունքն ամբողջությամբ ընդունվելուց և Պատվիրատուի կողմից հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո:

4.3 Կանխավճարի տրամադրման պայմանները և մարումը

4.3.1 Պայմանագրի գնից՝ մինչև 2 955 000 (երկու միլիոն ինը հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կատարողի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում, որը չի կարող ավել լինել տվյալ տարվա համար հատկացված գումարից:

4.3.2 Կատարողը կանխավճար ստանալու վերաբերյալ գրությամբ Պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի չափի, դրա շրջանակներում կատարման ենթակա աշխատանքների և ժամկետների վերաբերյալ հիմնավորումներ:

4.3.3 Պատվիրատուն կանխավճար հատկացնում է պատասխանատու ստորաբաժանման եզրակացության հիման վրա:

4.3.4 Ներկայացվող բանկային երաշխիքի գործողության ժամկետը պետք է լինի առնվազն 15 ամիս:

4.3.5 Կատարողի կողմից ներկայացվող բանկային երաշխիքում պարտադիր պետք է նշված լինի Պատվիրատուի՝ Կատարողի կողմից կատարման ենթակա աշխատանքի ժամկետների խախտման դեպքում կանխավճարի հետգանձման իրավունքը:

4.3.6 Կանխավճարի մարումն իրականացվում է աշխատանքի հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը (350 օրացուցային օր) խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Կատարողը կրում է համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Հաջորդող տարիների աշխատանքները կիրականացվեն այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011019099
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Ճանապարհ» ՍՊԸ
ք. Երևան, Աճառյան 60
«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
Հ/Հ 2472300165260010
ՀՎՀՀ 03512651

Գլխավոր տնօրեն՝

_____ Է. Բեզոյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Արցախճան» ՍՊԸ
ք. Երևան, Աճառյան 1-ին նրբ., 24
«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
Հ/Հ 2472303749820000
ՀՎՀՀ 00915384

Գործադիր տնօրեն՝

_____ Ռ. Սողոյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
15.04.2021թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Ավտոմոբիլային ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմերի վերանայման աշխատանքների

ՀՀ դրամ

Աշխատանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
					հասցեն	ժամկետը
1	71241200/5	դրամ	11 820 000	1	Հայաստանի Հանրապետություն	Համաձայն տեխնիկական բնութագրի 4-րդ կետով սահմանված ժամկետի

Տեխնիկական բնութագիր

1	Իրավիճակի համառոտ նկարագիրը	Ներկայումս ՀՀ տարածքում գործող ՀՀՇՆ IV-11.05.02-99 «Ավտոմոբիլային ճանապարհներ» շինարարական նորմերը մշակվել և գործողության մեջ է դրվել 2000 թվականին: Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N827 որոշմամբ հաստատված «Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգություն» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄՏԿ 014/2011) «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի համաձայն ՀՀ տարածքում ուժի մեջ է մտել 2019 թվականի հունվարի 1-ից: ՀՀՇՆ 10-01-2014 «Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ» շինարարական նորմերի համաձայն շինարարական նորմերը պետք է պարունակեն դրույթներ, որոնք մանրամասնում են շինարարության ոլորտի տեխնիկական կանոնակարգման օբյեկտներին տեխնիկական կանոնակարգով սահմանված պարտադիր կիրառման և կատարման պահանջները: Համակարգի նորմատիվ փաստաթղթերը հանդիսանում են շինարարական օբյեկտների նախագծման (ներառյալ հետազոտումը), շինարարության, շահագործման և քանդման, շինարարական արտադրատեսակների և նյութերի արտադրության ժամանակ, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի պահանջների իրականացման նպատակով միջոլորտային կարգավորման միջոցներից մեկը: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի, 2011 թվականի մարտի 9-ին Եվրամիության խորհրդի կողմից ընդունված N305/2011/EEC կանոնակարգի պահանջները, ԱՊՀ շրջանակներում կնքված Միջկառավարական համաձայնագրերը (13 մարտի 1992թ. և 9 սեպտեմբերի 1994թ.), ԵՄ-Հայաստան գործընկերության և համագործակցության համաձայնագրի, Առևտրի Համաշխարհային Կազմակերպության «Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրը, ԵՄ-Հայաստան խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի դրույթները, Եվրասիական տնտասական միությանը (ԵԱՏՄ) անդամակցելու հետ կապված մարտահրավերներն անհրաժեշտություն է առաջացել վերանայել ՀՀՇՆ IV-11.05.02-99 «Ավտոմոբիլային ճանապարհներ» շինարարական նորմերը:

2	Նորմատիվ փաստաթղթերի (ՀՀ շինարարական նորմերի) վերանայման աշխատանքների համառոտ բնութագիրը	«Ավտոմոբիլային ճանապարհներ» շինարարական նորմերը պետք է վերանայվեն Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության և ոլորտը կարգավորող փոխկապակցված այլ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նոր կառուցվող և վերակառուցվող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և արդյունաբերական ձեռնարկությունների մատույցային ճանապարհների նախագծման և կառուցման նորմերով սահմանված հիմնական դրույթներն ու պահանջները պետք է վերանայել հաշվի առնելով հանրապետության բնակլիմայական պայմանները, շինանյութերի և պատրաստվածքների բնութագրերն ու ֆիզիկամեխանիկական հատկությունները, ժամանակակից տեխնոլոգիաների առանձնահատկությունները, դրանց կիրառմանը և շրջակա միջավայրի պահպանությանը ներկայացվող պահանջները, կիրառված լուծումների տեխնիկատնտեսական արդյունավետությունը, ինչպես նաև շահագործման հուսալիության, երկարակեցության, անվտանգության և նորոգման աշխատանքների իրականացման համար հասանելիության պայմանների ապահովումը: Նորմերի դրույթների և պահանջների վերանայումը պետք է նպաստեն նախագծային և շինարարական աշխատանքների որակի բարձրացմանը, շինարարության և տեխնոլոգիական նոր մեթոդների ներդրմանը, երթևեկության հարմարավետության, անվտանգության ու հուսալիության բարձրացմանը: «Ավտոմոբիլային ճանապարհներ» շինարարական նորմերի վերանայման աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով նաև միջազգային, ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության շրջանակներում գործող միջպետական, ԵԱՏՄ և Եվրամիության երկրների շինարարության ոլորտում գործող նորմատիվ փաստաթղթերի սկզբունքային պահանջներն ու դրանց կիրարկումն ապահովող ստանդարտները:
3	Նորմատիվ փաստաթղթի (ՀՀ շինարարական նորմերի) վերանայման աշխատանքների հիմնավորումը և նորմատիվային պահանջները	Հիմնավորում ՀՀ 2021 թվականի պետական բյուջե, ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի հայեցակարգին հավանություն տալու մասին» N 17 արձանագրային որոշում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 26.05.1999թ «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի մշակման և հաստատման կարգը սահմանելու մասին» N351 որոշում, 2011 թվականի մարտի 9-ին Եվրամիության խորհրդի կողմից ընդունված N305/2011/EEC կանոնակարգի պահանջներ, ԱՊՀ շրջանակներում կնքված Միջկառավարական համաձայնագրեր (13 մարտի 1992թ. և 9 սեպտեմբերի 1994թ.), ԵՄ-Հայաստան գործընկերության և համագործակցության համաձայնագիր, Առևտրի Համաշխարհային Կազմակերպության «Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագիր, ԵՄ-Հայաստան խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի դրույթներ, Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) անդամակցելու հետ կապված մարտահրավերներ: Նորմատիվ փաստաթղթին առնչվող հիմնական նորմատիվ իրավական ակտերը - «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք - «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, - «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք, - «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, - ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշում, - ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» N 392-Ն որոշում, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի «ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N263-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի «ՀՀՇՆ

		IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի հաստատման մասին» N253-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N102-Ն հրաման, - ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 13.04.2017թ. «ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական հորմերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու և մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» N56-Ն հրաման:
4	Նորմատիվատեխնիկական փաստաթղթի կազմը, բովանդակությունը, կառուցվածքը (այդ թվում մշակման ընթացակարգը)	Նորմատիվատեխնիկական փաստաթղթի մշակումը նախատեսվում է . - ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.03.2014թ «ՀՀՇՆ 10-01-2014 «Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 65-Ն հրամանով սահմանված շինարարական նորմերի բովանդակությանը, կառուցվածքին, շարադրմանը և ձևավորմանը ներկայացվող հիմնական պահանջներին համապատասխան: Շինարարական նորմերի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակումն իրականացվում է հետևյալ ընթացակարգով (հաջորդականությամբ). **1-ԻՆ ՓՈՒԼ (ժամկետ՝ 180 օրացուցային օր)** ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ Կատարողի կողմից անհրաժեշտ ելակետային տվյալների հավաքագրում և Նախագծի առաջին խմբագրության մշակում և ներկայացում Պատվիրատուին: **2-ՐԴ ՓՈՒԼ (ժամկետ՝ 40 օրացուցային օր)** ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ Կատարողը նախագծի վերաբերյալ Պատվիրատուի կողմից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա լրամշակում է փաստաթղթի նախագիծը և առաջարկությունների և դիտողությունների ամփոփագրի (առաջարկների ընդունման կամ չընդունման) հետ համատեղ լրամշակված նախագիծը ներկայացնում է Պատվիրատուին: **3-ՐԴ ՓՈՒԼ (ժամկետ՝ 130 օրացուցային օր)** ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱՄՇԱԿՈՒՄ Կատարողը, Պատվիրատուի կողմից լրամշակված Նախագծի քննարկման արդյունքներով ներկայացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա իրականացնում է Նախագծի վերջնամշակում և ներկայացնում Պատվիրատուին: **ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ** 1. Նախագիծը հանրության, շահագրգիռ պետական մարմինների և մասնագիտացված կազմակերպությունների քննարկմանն է ներկայացվում Պատվիրատուի կողմից: Քննարկման արդյունքները, գրավոր, տրամադրվում են Կատարողին ուսումնասիրության՝ դրանք համապատասխան հիմնավորմամբ ընդունելու կամ մերժելու (1-ին և 2-րդ փուլերից հետո): 2. Նախագծի վերաբերյալ տարաձայնությունների առկայության դեպքում դրանց վերացման և փաստաթղթի ընդունման վերաբերյալ համապատասխան վերջնական որոշման կայացման նպատակով Պատվիրատուն կազմակերպում է լրացուցիչ քննարկում, որի արդյունքները ամփոփվում են Կատարողի կողմից:
5	Այլ պահանջներ և պայմաններ	ՎԵՐՋՆԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ ՓԱԹԵԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ

		➢ Նախագծի վերջնամշակված փաթեթը ներկայացվում է Պատվիրատուին փաստաթղթային տարբերակով՝ 3-ական օրինակ և էլեկտրոնային կրիչով, հայերեն և ռուսերեն: Կից ներկայացվում են (մեկական օրինակ). 1. Նախագծի մշակման հիմնավորումը՝ Նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև օտարերկրյա պետությունների համապատասխան նորմերի և ստանդարտների հետ փաստաթղթի համադրելիության արդյունքները, 2. հանրային քննարկումների, շահագրգիռ պետական մարմինների և մասնագիտացված կազմակերպությունների հետ Նախագծի քննարկման արդյունքներով կազմված կարծիքների ամփոփաթերթը, ուղեկցող և պատասխան գրությունների (առաջարկությունների և դիտողությունների) պատճենները, առաջին և վերջին խմբագրությամբ Նախագծի տարբերակները, 3. Նախագծի քննարկման համար կազմակերպված խորհրդակցությունների արձանագրությունների պատճենները (եթե այդպիսիք առկա են): ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ Աշխատանքների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունների ներկայացում (գրավոր) ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ առնվազն 30 օրացուցային օր պարբերականությամբ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011019099
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

(ստորագրություն) Ա. Մկրտչյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Ճանապարհ» ՍՊԸ
ք. Երևան, Աճառյան 60
«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
Հ/Հ 2472300165260010
ՀՎՀՀ 03512651

Գլխավոր տնօրեն՝

(ստորագրություն) Է. Բեզոյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Արցախճան» ՍՊԸ
ք. Երևան, Աճառյան 1-ին նրբ., 24
«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
Հ/Հ 2472303749820000
ՀՎՀՀ 00915384

Գործադիր տնօրեն՝

(ստորագրություն) Ռ. Սողոյան

Կ.Տ.

Հավելված N 2
15.04.2021թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
«Ավտոմոբիլային ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմերի վերանայման աշխատանքների

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/5	«Ավտոմոբիլային ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմերի վերանայման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	2 955 000	2 955 000	2 955 000	2 955 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011019099
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

(ստորագրություն) Ա. Մկրտչյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Ճանապարհ» ՍՊԸ
ք. Երևան, Աճառյան 60
«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
Հ/Հ 2472300165260010
ՀՎՀՀ 03512651

Գլխավոր տնօրեն՝

(ստորագրություն) Է. Բեգոյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Արցախճան» ՍՊԸ
ք. Երևան, Աճառյան 1-ին նրբ., 24
«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
Հ/Հ 2472303749820000
ՀՎՀՀ 00915384

Գործադիր տնօրեն

(ստորագրություն) Ռ. Սողոյան

Կ.Տ.

Հավելված N 3
15.04.2021թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
15 . 04 .2021թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 5.1
ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «14» 04 2021թ.**

"Ճանապարհի" ՍՊԸ և "Արցախճան" ՍՊԸ ՀՁ ի դեմս "Ճանապարհի" ՍՊ Ընկերության գլխավոր տնօրեն
Ընկերության անվանումը

Էդուարդ Բեզոյանի (ID քարտ 000335752, տրվ. 24.06.2013թ. 006 կողմից) և "Արցախճան" ՍՊ Ընկերության
Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

գործադիր տնօրեն Ռոբերտ Սողոյանի (ID քարտ 000563718, տրվ. 18.10.2013թ. 006 կողմից), որը գործում է
Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող

պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1 Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2 Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Ճանապարհ» ՍՊԸ
ընկերության անվանումը

ք.Երևան, Աճառյան 60 շինություններ
ընկերության հասցեն

«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

Հ/Հ 2472300165260010
ընկերության բանկային հաշվեհամարը

ՀՎՀՀ 03512651
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Գլխավոր տնօրեն Էդուարդ Կոլոմբոսի Բեզոյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

«Արցախճան» ՍՊԸ
ընկերության անվանումը

ք.Երևան, Աճառյան 1-ին նրբ., 24
ընկերության հասցեն

«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

Հ/Հ 2472303749820000
ընկերության բանկային հաշվեհամարը

ՀՎՀՀ 00915384
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Գործադիր տնօրեն Ռոբերտ Ստեփանի Սողոյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ **«Ճանապարհ» ՍՊԸ և "Արցախճան" ՍՊԸ ՀՁ**

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **«Ճանապարհ» ՍՊԸ - «Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ, "Արցախճան" ՍՊԸ - «Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ**

6. Վճարողի հաշվի համարը՝ **«Ճանապարհ» ՍՊԸ - 2472300165260010 "Արցախճան" ՍՊԸ - 2472303749820000**

7. Վճարողի ՀՎՀՀ՝ **«Ճանապարհ» ՍՊԸ – 03512651, "Արցախճան" ՍՊԸ – 00915384**

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02565827**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900005000758**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ **1 182 000 (Մեկ միլիոն հարյուր ութսուներկու հազար)**

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ AMD**

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

Պայմանագրի ծածկագիր՝ ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ Ճանապարհ ՍՊԸ /_____/ Արցախճան ՍՊԸ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

Հավելված N 4.2
ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան «14» 04 2024թ.**

"Ճանապարհի" ՍՊԸ և "Արցախճան" ՍՊԸ ՀՁ ի դեմս "Ճանապարհի" ՍՊ Ընկերության գլխավոր տնօրեն
Ընկերության անվանումը

Էդուարդ Բեզոյանի (ID քարտ 000335752, տրվ. 24.06.2013թ. 006 կողմից) և "Արցախճան" ՍՊ Ընկերության
Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

գործադիր տնօրեն Ռոբերտ Սողոյանի (ID քարտ 000563718, տրվ. 18.10.2013թ. 006 կողմից), որը գործում է
Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Ճանապարհ» ՍՊԸ

ընկերության անվանումը

ք.Երևան, Աճառյան 60 շինություններ

ընկերության հասցեն

«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

ՀՀ 2472300165260010

ընկերության բանկային հաշվեհամարը

ՀՎՀՀ 03512651

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Գլխավոր տնօրեն Էդուարդ Կոլոմբոսի Բեզոյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

«Արցախճան» ՍՊԸ

ընկերության անվանումը

ք.Երևան, Աճառյան 1-ին նրբ., 24

ընկերության հասցեն

«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

ՀՀ 2472303749820000

ընկերության բանկային հաշվեհամարը

ՀՎՀՀ 00915384

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Գործադիր տնօրեն Ռոբերտ Ստեփանի Սողոյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ **«Ճանապարհ» ՍՊԸ և "Արցախճան" ՍՊԸ ՀՁ**

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **«Ճանապարհ» ՍՊԸ - «Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ, "Արցախճան" ՍՊԸ - «Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ**

6. Վճարողի հաշվի համարը՝ **«Ճանապարհ» ՍՊԸ - 2472300165260010 "Արցախճան" ՍՊԸ - 2472303749820000**

7. Վճարողի ՀՎՀՀ՝ **«Ճանապարհ» ՍՊԸ – 03512651, "Արցախճան" ՍՊԸ – 00915384**

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02565827**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900008000664**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ **1 773 000 (Մեկ միլիոն յոթ հարյուր յոթանասուներեք հազար)**

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ AMD**

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

Պայմանագրի ծածկագիր՝ ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները Ճանապարհ ՍՊԸ /_____/ Արցախճան ՍՊԸ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.